Դեկտեմբեր, 2025

Երաժշտության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 70:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասն ընդգրկում է տասը առաջադրանք:

Առաջադրանքներ № 1-6:

Հրահանգ: Առաջին վեց առաջադրանքից յուրաքանչյուրը բաղկացած է մեկ երաժշտական հատվածից և երկու հարցից: Յուրաքանչյուր հարցին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ընտրեք պատասխանը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը: Ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, համապատասխանաբար, յուրաքանչյուր առաջադրանք՝ երկու միավոր:

Առաջադրանքի համար նախատեսված երաժշտական հատվածը լսում եք երկու անգամ: Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև դադարը կազմում է 20 վայրկյան: Նախքան երաժշտական հատվածի ունկնդրելը տրվում է 10 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը կարդալու համար:

Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:

(2) **Առաջադրանք № 1.**

Նախքան առաջին երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

1.1 Վրաստանի ո՞ր շրջանի երգն է:

ա) Սամեգրելոյի,

բ) Գուրիայի,

գ) Խևսուրեթիի,

դ) Կախեթիի:

1.2 Բազմաձայնության ո՞ր տեսակին է պատկանում երգը:

ա) Բուրդոնական,

բ) կոմպլեքսային,

գ) կոնտրաստային,

դ) օստինատային:

(2) **Առաջադրանք № 2.**

Նախքան երկրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

2.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Ռնազ Լաղիձեն,

ծ) Գիա Ղանչելին,

գ) Բիձինա Կվերնաձեն,

զ) Օթար Թաքթաքիշվիլին:

2.2 Ո՞ր օպերային ձայնն է կատարում հատվածը:

ա) Կոնտրալտոն,

ծ) սոպրանոն,

գ) կոլորատուրային սոպրանոն,

զ) մեցցո-սոպրանոն:

(2) **Առաջադրանք № 3.**

Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

3.1 Ո՞ր գործիքային կազմն է կատարում հատվածը:

ա) լարային-աղեղնավոր երաժշտական գործիքների նվագախումբը,

բ) փողային երաժշտական գործիքների նվագախումբը,

գ) սիմֆոնիկ նվագախումբը,

դ) կամերային-գործիքային անսամբլը:

3.2 Ո՞վ է ստեղծագործության կոմպոզիտորը:

ա) Գուստավ Մալերը,

բ) Կլոդ Դեբյուսին,

գ) Սերգեյ Ռախմանինովը,

դ) Ռիխարդ Շտրաուսը:

(2) **Առաջադրանք № 4.**

Նախքան չորրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

4.1 Ո՞ր օպերային ձայնն է կատարում հատվածը:

ա) Կոնտրտենոր,

ծ) բաս,

գ) տենոր,

զ) բարիտոն:

4.2 Ո՞ր դարաշրջանին/հոսանքին է պատկանում ստեղծագործությունը:

ա) Կլասիցիզմին,

ծ) Բարոկկոյին,

գ) Իմպրեսիոնիզմին,

զ) Ռոմանտիզմին:

(2) **Առաջադրանք № 5.**

Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

5.1 Ո՞ր ժանրին է պատկանում ստեղծագործությունը:

ա) Սոնատին,

բ) կոնցերտին,

գ) ուվերտյուրային,

դ) սիմֆոնիային:

5.2 Ո՞ր դարաշրջանին/ուղղությանն է պատկանում ստեղծագործությունը:

ա) Իմպրեսիոնիզմին,

բ) Բարոկկոյին,

գ) Կլասիցիզմին,

դ) Ռոմանտիզմին:

(2) **Առաջադրանք № 6.**

Նախքան վեցերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.

6.1 Ո՞ր ժանրին է պատկանում հատվածը:

ա) Ռոք օպերային,

բ) օպերետին,

գ) մյուզիքլին,

դ) բուֆ-օպերային:

6.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Լայոնել Բարթը,

բ) Լեոնարդ Բերնսթայնը,

գ) Ջորջ Գերշվինը,

դ) Ֆրեդերիկ Լոու:

(1) Առաջադրանք № 7.

Հրահանգ: Ունկնդրեք երաժշտական հնչյունների շարքը: Նոտային գրառման մեջ տրված լադի չորս տարբերակից ընտրեք ունկնդրած լադի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը:

Հնչյունների շարքը լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



(1) Առաջադրանք № 8.

<u>Հրանանգ:</u> Լսեք երաժշտական արտահայտությունը (ֆրազ): Նոտային գրառման մեջ տրված չորս տարբերվող ռիթմիկ ֆիգուրացիաներից ընտրեք ունկնդրած համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը:

Երաժշտական արտահայտությունը (ֆրազ) լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



(5) Առաջադրանք № 9.

Մեղեդային թելադրություն:

Հրահանգ: Ունկնդրեք մեղեդին և գրառեք նոտային համակարգում: Մեղեդին միաձայնային է, ութ տակտանոց և տրված է մեկ տոնայնության մեջ: Այն լսելու և գրառելու համար տրվում է 15 րոպե: Մեղեդին լսում եք ձայնագրությամբ հինգ անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե:

Թելադրությունը տրված է *Մի բեմոլ մաժոր (Es dur)* տոնայնության մեջ:

Ձեր կողմից գրառված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգ, գրչով:

(13) **Առաջադրանք № 10.**

Երաժշտական ստեղծագործության վերլուծություն

<u>Հրահանգ:</u> Վերլուծեք երաժշտական ստեղծագործության հատվածը՝ աուդիո ձայնագրության և նոտային գրառման հիման վրա: Երաժշտական ստեղծագործության հատվածը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը վերանայելու համար:

Հարցերը դիտեք հաջորդ երկու էջի վրա:

(2) 1. Ո՞ր ժանրին է պատկանում ձեր ունկնդրած ստեղծագործության հատվածը:

Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

(3) 2. Որոշեք՝

ա) հատվածի սկզբնական տոնայնությունը,

բ) 68-82-րդ տակտերում տրված հատվածի երաժշտական ձևը,

գ) 81-82-րդ տակտերում տրված կադանսում պարունակվող ակորդների հարմոնիկ (ներդաշնակ) ֆունկցիաները:

(3) 3. Բնութագրեք տրված հատվածը գեղարվեստա-հուզական տեսանկյունից: Վերլուծեք և նկարագրեք երաժշտության արտահայտչամիջոցները, որոնք հատկապես կարևոր են դրա երաժշտագեղարվեստական բովանդակությունը ստեղծելու համար (ինչ տեսակի մեղեդի, ռիթմ, տեմպ, ռեգիստր, ներդաշնակություն (հարմոնիա), լադատոնայնություն, ֆակտուրա և այլ է կիրառված ունկնդրած հատվածում):

(2) **4.** Ունկնդրած ստեղծագործության հատվածի երաժշտական բնութագրիչների հիման վրա, որոշեք կոմպոզիտորի ինքնությունը և այն դարաշրջանը, որին նա պատկանում է:
(3) **5.** Բնութագրեք կոմպոզիտորի ստեղծագործականությունը և նշեք, թե ինչ նորարարություն է նա ներմուծել երաժշտության ոլորտում: Դիտարկեք ստեղծագործությունը, որին պատկանում է ունկնդրած հատվածը և դատողություն արեք նրա պատմամշակութային համատեքստի շուրջ:

Երաժշտական հատվածի նոտային գրառումը դիտեք հաջորդ էջերում:


Largo.
f
pesante
dim.
p
Moderato.
6
p dolce
12


17
22
tr
Ped.
27
ritenuto


32
poco cresc.
6
6
6
35
a tempo
39
agitato


43
sempre più mosso
47
8
f
51
poco a poco meno f


55
59
63
smorz.
Meno mosso.
sotto voce
pp


69
75
81
sempre pp


85
89
sempre
dimin.
e rallent.
93
a tempo
sotto voce
pp


97
Ped.
Ped.
Ped.

II մաս

Առաջադրանքներ № 11-28.

Հրահանգ: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա, հետևյալ կերպ՝ դրեք X նշանը պատասխանների համապատասխան վանդակում: Ոչ մի ուրիշ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չեն ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշված պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է՝ 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 11.**

Մորիս Ռավելի «Բոլերո»-ում ո՞ր երաժշտական գործիքի նվագաբաժինն (պարտիա) է հնչում պիեսի ողջ ընթացքում:

ա) Թմբուկի,

բ) ջութակի,

գ) սաքսոֆոնի,

դ) վալդհոռնի:

(1) **Առաջադրանք № 12.**

Ո՞ր վրացական ժողովրդական երգն է պատկանում օրացուցային ժանրին:

ա) «Միրանգուլա»,

բ) «Բատոնեբո»,

գ) «Չարի բամա»,

դ) «Ալիլո»:

(1) **Առաջադրանք № 13.**

Ո՞ր բնութագիրը *չի համապատասխանում* Ռիխարդ Վագների «Լոհենգրին» օպերային:

ա) Օպերայի գեղարվեստական կերպարները, հերոսները և իրադարձություններն արտացոլվում են լեյտմոտիվային համակարգով,

բ) ստեղծագործության նվագախմբային նախերգանքը՝ ֆորշպիլը երաժշտական թեմատիկայով կապված է օպերայի հետ,

գ) մենախոսությունների և երկխոսությունների վրա կառուցված օպերային դրամատուրգիան բացառում է երգչախմբային տեսարանները,

դ) օպերայի լիբրետոն ստեղծել է հենց Վագները, Գրաալի ասպետների մասին էպոսի հիման վրա:

(1) **Առաջադրանք № 14.**

Ո՞ր երաժշտական ժանրը *չի համապատասխանում* Բարոկկո դարաշրջանի երաժշտությանը:

ա) քառամաս սիմֆոնիան,

բ) կոմիկական ժանրի օպերան,

գ) աստվածաշնչյան թեմայով օրատորիան,

դ) բազմամաս կոնցերտը:

(1) **Առաջադրանք № 15.**

Ինչպե՞ս է կոչվում մի քանի անկախ պիեսներից բաղկացած գործիքային ցիկլը:

ա) Սիմֆոնիա,

բ) սոնատ,

գ) կոնցերտ,

դ) սյուիտ:

(1) **Առաջադրանք № 16.**

Ո՞ր պարային ժանրի վրա են հիմնված Աստոր Պիացոլլայի ստեղծագործությունները:

ա) Վալսի,

բ) խաբաներայի,

գ) տանգոյի,

դ) պոլոնեզի:

(1) **Առաջադրանք № 17**

Երաժշտական ո՞ր ժանրերն են բնորոշ Ռենեսանսի դարաշրջանին:

ա) Օպերան և կանտատը,

բ) մեսսան և մոտետը,

գ) սկերցոն և էտյուդը,

դ) բալետը և հիմնը:

(1) **Առաջադրանք № 18.**

Ո՞ր հեղինակի գրական տեքստն է դրված Նիկո Սուլխանիշվիլիի «Մեստվիրուլի» երգչախմբի հիմքում:

ա) Ակակի Ծերեթելիի,

բ) Գրիգոլ Օրբելիանիի,

գ) Իլիա Ճավճավաձեի,

դ) Նիկոլոզ Բարաթաշվիլիի:

(1) **Առաջադրանք № 19.**

Ո՞ր առանձնահատկությունը *բնորոշ չէ* Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերային:

ա) Նախերգանքը սահմանում է օպերայի տրամադրությունը, բայց երաժշտական թեմաներով կապված չէ դրա հետ,

ծ) օպերայի սկզբնաղբյուրը՝ Պիեռ Բոմարշեի կատակերգությունը, ֆրանսերեն է, իսկ լիբրետոն՝ իտալերեն,

գ) օպերան հիմնված է ոչ թե համարային կառուցվածքի, այլ անընդհատ զարգացման սկզբունքի վրա,

զ) ստեղծագործությունը պատկանում է օպերա բուֆֆ ժանրին, թեև պարունակում է նաև այլ ժանրերի օպերաների տարրեր:

(1) **Առաջադրանք № 20.**

Ո՞ր երաժշտի «դիմանկարն» է *բացակայում* Ռոբերտ Շումանի «Կառնավալ» դաշնամուրային սյուիտում:

ա) Յոհաննես Բրամսի,

բ) Ֆրեդերիկ Շոպենի,

գ) Նիկոլո Պագանինիի,

դ) Ռոբերտ Շումանի:

(1) **Առաջադրանք № 21.**

Երաժշտության ո՞ր բնութագրերի զույգն է համապատասխանում ռոմանտիզմի դարաշրջանին:

ա) Կոնչերտո գրոսսո և դինամիկ հակադրություններ,

բ) երգչախմբային a cappella և մոնոդիկ մտածողություն,

գ) պարային սյուիտներ և պոլիֆոնիկ շարք,

դ) մանրագեղ ձևեր և ծրագրային երաժշտություն:

(1) **Առաջադրանք № 22.**

Ի՞նչ երաժշտական գործիքներ է օգտագործել Քամիլ Սեն-Սանսը «Կարապը» պիեսում «Կենդանիների դիմակահանդես» գործիքային ստեղծագործությունից:

ա) Մենանվագ կոնտրաբաս և դաշնամուր,

բ) մենանվագ ջութակ և կամերային նվագախումբ,

գ) մենանվագ ֆլեյտա և սիմֆոնիկ նվագախումբ,

դ) մենանվագ թավջութակ և դաշնամուր:

(1) **Առաջադրանք № 23.**

Ջուզեպպե Վերդիի օպերայի ո՞ր դրվագն է դրվել Ֆրանց Լիստի «Ռիգոլետտո» պարաֆազի հիմքում:

ա) Ռիգոլետտոյի տեսարանը և մեներգը (արիա) երկրորդ գործողությունից,

բ) Մադդալենայի, Սպարաֆուչիլեի և Ջիլդայի եռերգը (տրիո),

գ) Դուքսի, Մադդալենայի, Ռիգոլետտոյի և Ջիլդայի քառերգը (կվարտետ),

դ) Ջիլդայի ռեչիտատիվը և արիան առաջին գործողությունից:

(1) **Առաջադրանք № 24.**

Ի՞նչ ձևով է գրվում դասական սիմֆոնիկ ցիկլի երրորդ մասը՝ մենուետը:

ա) Եռամաս ձևով,

բ) ռոնդոյի ձևով,

գ) սոնատային ձևով,

դ) վարիացիոն ձևով:

(1) **Առաջադրանք № 25.**

Միջնադարում ի՞նչ լեզվով էին գրվում մեսսայի երգասացությունների տեքստերը:

ա) Իտալերեն,

բ) լատիներեն,

գ) գերմաներեն,

դ) ֆրանսերեն:

(1) **Առաջադրանք № 26.**

Ո՞ր տերմինն է նշանակում հնչողության ուժգնության ավելացում:

ա) Diminuendo,

բ) Agitato,

գ) Accelerando,

դ) Crescendo:

(1) **Առաջադրանք № 27.**

Ո՞ր ստեղծագործական առանձնահատկությունը *չի համապատասխանում* Բելա Բարտոկի երաժշտական ոճին:

ա) Ակուստիկ և էլեկտրոնային երաժշտության արտահայտչական հնարքների միավորումը,

ծ) ժողովրդական երաժշտության ռիթմի և ինտոնացիայի ներթափանցումը պրոֆեսիոնալ երաժշտության մեջ,

գ) տոնային շարքի խախտումն ու դիատոնիկ լադային համակարգի կիրառումը,

զ) արևելյան և արևմտյան երաժշտության ոճական առանձնահատկությունների համադրությունը:

(1) **Առաջադրանք № 28.**

Ո՞ր օպերայի լիբրետտոն *չի գրվել* գերմաներեն:

ա) Ռիխարդ Վագների «Վալկիրիայի»,

բ) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «Կախարդական սրինգի»,

գ) Գեորգ Ֆրիդրիխ Հենդելի «Ռինալդոյի»,

դ) Կարլ Վեբերի «Ազատ հրաձիգը»:

Առաջադրանքներ № 29 - 32.

Կառուցում նոտայից

<u>Հրահանգ:</u> Կառուցեք և պատասխանների թերթիկի վրա տրված նոտաների համակարգի վրա գրառեք՝ ինտերվալը, ակորդները և լադը *<u>Մի</u>* նոտայից:

(1) 29. Փոքրացված սեպտիմա:

(1) 30. Մաժոր կվարտսեքստակորդ:

(1) 31. Փոքր մինոր սեպտակորդ:

(1) 32. Հարմոնիկ մինոր:

Առաջադրանքներ № 33-35.

Համապատասխանության որոշում

<u>Հրահանգ:</u> Առաջադրանքում տրված է թվարկացանկի երկու սյունակ: Որոշեք համապատասխանությունը դրանց միջև: Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (1, 2, 3) համապատասխանում է աջ սյունակի *<u>միայն մեկ</u>* տվյալ (ա, ծ, գ, զ, ց): Յուրաքանչյուր ընտրված համապատասխանությունը պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում նշեք X նշանով: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

(3) **Առաջադրանք № 33.**

Որոշեք համապատասխանությունը դաշնամուրային ժանրերի և ստեղծագործությունների միջև.

1. Սոնատ	ա) «Կամպանելլա»
2. Էտյուդ	բ) «Ապասիոնատ»
3. Պրելյուդ	գ) «Գուգուլի»
	դ) «Քայլեր ձյան վրա»
	ե) «Գիշերային Գասպար»

(3) **Առաջադրանք № 34.**

Որոշեք համապատասխանությունը գործող կերպարների և օպերաների միջև.

1. Կալաֆ	ա) «Արիադնա»
2. Մազետտո	ծ) «Աիդա»
3. Էսկամիլիո	գ) «Տուրանդոտ»
	զ) «Կարմեն»
	ը) «Դոն Ժուան»

(3) **Առաջադրանք № 35.**

Որոշեք համապատասխանությունը երաժշտական ուղղությունների և կոմպոզիտորների միջև.

1. Մինիմալիզմ	ա) Ֆրանց Շուբերտ
2. Բարոկկո	բ) Առնոլդ Շյոնբերգ
3. Ռոմանտիզմ	գ) Յոհան Սեբաստիան Բախ
	դ) Սթիվ Ռայխ
	ե) Յոզեֆ Հայդն

Առաջադրանքներ № 36-40.

«Ճշմարիտ է-Սխալ է»

<u>Հրահանգ:</u> Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ: Եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում, նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, *<u>իսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:</u>*

Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը կարող եք համապատասխանեցրել ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն: <u>Հաշվի առեք,</u> որ պատասխանը չի ընդունվի, եթե տրված բացատրության դրական ձևը փոխեք բացասականով կամ հակառակը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 36.**

Presto-ն երաժշտական գործիքի վրա ձայն արտաբերելու եղանակներից մեկն է:

(1) **Առաջադրանք № 37.**

Pizzicato - երաժշտության մեջ հույզը նշանակող տերմիններից մեկը:

(1) **Առաջադրանք № 38.**

Գուրիական ժողովրդական «Խասանբեգուրա» երգը կոնտրաստային բազմաձայնության օրինակ է:

(1) **Առաջադրանք № 39.**

Sprechgesang կոչվում է երգեցողությունն առանց գործիքային նվագակցության:

(1) **Առաջադրանք № 40.**

Staccato – ագոգիկան նշանակող տերմին:

Առաջադրանքներ № 41-42.

Ժամանակագրության որոշում

<u>Հրահանգ:</u> Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույնը դասավորեք թվարկացանկը: Պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում ժամանակագրական հաջորդականությունը նշված է թվանշաններով՝ 1-ից մինչև 4-ը: Գրեք պատասխանները վանդակում՝ ընտրված թվանշանի երկայնքով, այբուբենի համապատասխան տառերով (ա, ծ, գ, զ): Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 41.**

Ժամանակագրական առումով դասավորեք ֆրանսիացի կոմպոզիտորների ազգանունները՝ ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի.

ա) Ժորժ Բիզե,

բ) Կլոդ Դեբյուսի,

գ) Կլեման Ժանեկեն,

դ) Օլիվիե Մեսիան:

(1) **Առաջադրանք № 42.**

Ժամանակագրական առումով դասավորեք օպերային երգիչների թվարկացանկը՝ ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի.

ա) Լուչիանո Պավարոտտի,

բ) Մարիո դել Մոնակո,

գ) Էնրիկո Կարուզո,

դ) Խուան Դիեգո Ֆլորես: